

Մաքսային հայտարարագրում իրականացնող անձինք և նրանց դերը մաքսային գործում

Խառնադյան Ն. Ս.

*ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետ, Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում
մասնագիտության ասպիրանտ (Երևան, Հայաստան)
khns1996@gmail.com*

Հանգուցաբառեր՝ հայտարարագրում, մաքսային հայտարարագիր, մաքսային ներկայացուցիչ, մաքսային ձևակերպումների մասնագետ, ինքնահայտարարագրում, ինքնահայտարարատու, ծախսեր, ռիսկ:

Лица, выполняющие таможенное декларирование, и их роль в таможенном деле

Харатян Н. С.

*АГЭУ, Кафедра Финансов, аспирант (Ереван, Армения)
khns1996@gmail.com*

Аннотация: Работа относится к основным субъектам, реализующие декларирование, и их основным особенностям. Мы изучили таможенных представителей и самодекларантов, работающих в таможенной сфере, поскольку они играют важную роль в процессе декларирования. Мы взвесили их роли. Хотя сейчас таможенное декларирование довольно часто осуществляется таможенными брокерами, некоторые декларанты делают это самостоятельно, становясь самодекларантами. Были рассмотрены положительные и отрицательные стороны обеих. Мы постарались уточнить преимущества и недостатки каждого, уточнив, какой вариант более выгоден, в целом, а также предложили несколько вариантов для улучшения.

Ключевые слова: декларирование, таможенная декларация, таможенный представитель, специалист по таможенному оформлению, самодекларирование, самодекларант, расходы, риск.

Entities implementing customs declaration and their role in customs

Kharatyan N. S.

*ASUE Finance Faculty, PhD (Yerevan, Armenia)
khns1996@gmail.com*

Abstract: Paper refers to the main subjects implementing customs declaration, therefore in the work their main features were observed. We studied customs representatives and self-declarants working in the customs field as they have an important role in the declaration process. Though, now frequently declaration process is made by customs brokers, some declarants do it on their own- becoming self-declarants. We've measured their roles. The positive and negative aspects were considered, and we have tried to clarify the advantages and disadvantages of each, specifying which option gives more benefits. We also suggested some ways for improvement.

Key words: the process of declaration, customs declaration, customs representative, customs clearance specialist, self-declaration, self-declarant, costs, risks.

Հայտարարագրումը մաքսային մարմնում մաքսային հայտարարագրի միջոցով ապրանքների վերաբերյալ տեղեկությունների, ընտրված մաքսային ընթացակարգի վերաբերյալ և (կամ) ապրանքների բացթողման համար անհրաժեշտ այլ տեղեկությունների հայտարարումն է, [12, հոդված 2, 35 կետ; 2, 159; 6, 12; 13] որի միջոցով հայտարարատուն մաքսային մարմիններին տեղեկացնում է մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղաշարժի մասին [4, 334]: Հայտարարագրումն իրականացվում է հայտարարատուների կամ մաքսային ներկայացուցիչների կողմից, որոնք գործում են հայտարարատուի անունից և նրա հանձնարարությամբ՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ մաքսային

հայտարարագրի օգտագործմամբ [1, 118; 7, 159]: Հայտարարատուն այն անձն է, որը հայտարարագրում է ապրանքներ կամ որի անունից հայտարարագրվում են ապրանքներ [12, հոդված 2, 7 կետ ; 3, 16; 13] և նա անդամ պետության օրենսդրության համապատասխան, պատասխանատվություն է կրում պարտականությունները չկատարելու, [5, 12] մաքսային հայտարարագրում ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելու, ինչպես նաև մաքսային ներկայացուցիչին անվավեր, այդ թվում՝ կեղծ և (կամ) ակնհայտ ոչ հավաստի (սուտ) տեղեկություններ պարունակող փաստաթղթեր ներկայացնելու համար: Մաքսային ներկայացուցիչը իրավաբանական անձ է, որը ներառված է մաքսային ներկայացուցիչների ռեեստրում և մաքսային

գործառնություններ է կատարում հայտարարատուի կամ շահագրգիռ այլ անձի անունից և հանձնարարությամբ [12, հոդված 2, 35 կետ 44; 11, գլուխ 6; 13]: Երբ կազմակերպությունն ինքն է իրականացնում իր հայտարարագրումը, ապա այդ գործընթացն անվանում են ինքնահայտարարագրում: Այս դեպքում կարիք չկա մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորում ունենալու, քանի որ կազմակերպությանը՝ իր դիմումի համաձայն, տրամադրվում է հայտարարագրման ավտոմատացված համակարգի մուտքի ծածկագիր և գաղտնաբառ: Սակայն այս սկզբունքն ունի նաև իր բացասական կողմերը՝ կապված անհրաժեշտ մասնագիտական ունակություններ չունեցող անձանց հայտարարագրման հնարավորություն ընձեռելու հետ: Արդյունքում երբեմն նրանց կողմից նկատվում է ոչ լուրջ մոտեցում և սխալ հայտարարագրման դեպքեր: Կարծում ենք, որ այդ հարցը ինչ-որ առումով կարելի է լուծել, եթե ինքնահայտարարատուները մուտքի ծածկագիր ստանալուց առաջ պարտավորվեն անցնել ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ում հայտարարատուների համար կազմակերպվող բազային գիտելիքներ տրամադրող դասընթացներին և փորձնական «Մեկ պատուհան» հարթակի թեստային տարբերակում հայտարարագիր գրանցեն: Այսպիսով՝ համեմատական

կարգով, ի տարբերություն մաքսային ձևակերպումների մասնագետի քննության՝ ծածկագրի տրամադրումը կլինի ավելի պարզեցված և միևնույն ժամանակ կբացառի այս պահին ինքնահայտարարատուների որոշ զանգվածի անտեղեկացվածությունը: Երբեմն ինքնահայտարարագրում իրականացնող անձը, չգիտակցելով և բավարար չափի տեղեկացված չլինելով, թույլ է տալիս լուրջ սխալներ և խախտումներ, և դա կարող է կրել պարբերական բնույթ, եթե, օրինակ, ռիսկերի ավտոմատացված համակարգով հայտարարագիրը ընտրվի ընտրողականության «կանաչ» ուղի ընթացակարգով: Ուստի անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել՝ բացառելով այսպիսի իրավիճակները:


Մի շարք կազմակերպություններ նախընտրում են դիմել միջնորդական ներկայացուցչի ծառայությանը, քանի որ այդ տարբերակը հնարավորություն է տալիս տնտեսվարող սուբյեկտին նվազեցնել ռիսկայնության աստիճանը: Այս դեպքում հայտարարագրումն իրականացվում է մաքսային ձևակերպումների մասնագետի կողմից: Օգտվելով մաքսային վիճակագրության վարման արդյունքում ստացված տվյալներից՝ ուսումնասիրենք թե ինչ հարաբերակցությամբ են ներկայացվում ՄՀ-երը ըստ հայտարարագրման եղանակի. (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1: *Ինքնահայտարարագրման և մաքսային միջնորդի միջոցով ներկայացվող մաքսային հայտարարագրերի հարաբերակցությունը: [15]*

Տարի	Եռամսյակ	Ինքնահայտարարագրման միջոցով	Մաքսային միջնորդի միջոցով
2014 թ.	1-ին եռամսյակ	18.84%	81.16%
	2-րդ եռամսյակ	18.52%	81.48%
	3-րդ եռամսյակ	22.57%	77.43%
	4-րդ եռամսյակ	23.18%	76.82%
2015 թ.	1-ին եռամսյակ	23.43%	76.57%
	2-րդ եռամսյակ	23.54%	76.46%
	3-րդ եռամսյակ	23.65%	76.35%
	4-րդ եռամսյակ	25.55%	74.45%
2016 թ.	1-ին եռամսյակ	28.17%	71.83%
	2-րդ եռամսյակ	31.83%	68.17%
	3-րդ եռամսյակ	31.12%	68.88%
	4-րդ եռամսյակ	32.75%	67.25%
2017 թ.	1-ին եռամսյակ	35.17%	64.83%
	2-րդ եռամսյակ	31.84%	68.16%
	3-րդ եռամսյակ	31.51%	68.49%
	4-րդ եռամսյակ	33.45%	66.55%
.2018 թ.	1-ին եռամսյակ	32.95%	67.05%
	2-րդ եռամսյակ	31.14%	68.86%

	3-րդ եռամսյակ	37.48%	62.52%
	4-րդ եռամսյակ	49.4%	50.6%
2019 թ.	1-ին եռամսյակ	44.9%	55.1%
	2-րդ եռամսյակ	47.4%	52.6%
	3-րդ եռամսյակ	48.5%	51.5%
	4-րդ եռամսյակ	44.1%	55.9%
2020 թ.	1-ին եռամսյակ	33,00%	67,00%
	2-րդ եռամսյակ	30,70%	69,30%
	3-րդ եռամսյակ	29,60%	70,40%
	4-րդ եռամսյակ	30,30%	69,70%
2021 թ.	1-ին եռամսյակ	26,10%	73,90%

Գրաֆիկորեն ցույց տանք մաքսային մարմիններին ներկայացված հայտարարագրերի բաշվածությունը ըստ ներկայացնողների տեսակարար կշիռների. ինքնահայտարարատուներ և հայտարարատուներ, ուլքեր օգտվում են մաքսային միջնորդների ծառայություններից:



Գրաֆիկ 1: Ինքնահայտարարագրման և մաքսային միջնորդի միջոցով ներկայացվող հայտարարագրերի տեսակարար կշիռները:

Նշենք, որ դեռ «Հ կառավարության 7 օգոստոսի 2008 թվականի «ՀՀ պետական եկամուտների (հարկային եվ մաքսային) վարչարարության ռազմավարության 2008-2011 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N 941-Ն որոշմամբ որպես մաքսային վարչարարության ռազմավարության սկզբունք սահմանվել էր ինքնահայտարարագրման համակարգի ընդլայնումը և մաքսային միջնորդի ինստիտուտի զարգացումը: Մաքսային ծառայության առջև դրված գերակա խնդիրներից էր՝ ինքնահայտարարագրման համակարգի ընդլայնումը և մաքսային միջնորդների ինստիտուտի կայացումը: Նպատակին հասնելու համար մաքսային ծառայությունը պետք է աջակցեր տնտեսվարող սուբյեկտներին և մաքսային միջնորդներին՝ բոլոր մաքսային մարմիններում կամ դրանց կից տարածքներում ինքնահայտարարագրման և

մաքսային միջնորդների գրասենյակներ ստեղծելու, տնտեսվարող սուբյեկտների գրասենյակներից էլեկտրոնային կապուղիների միջոցով մաքսային հայտարարագրերի ներկայացման և ընդունման հնարավորություն ստեղծելու և մաքսային պահեստներում մաքսային միջնորդների գրասենյակներ ստեղծելու հարցում: Արդյունքում ակնկալվում էր մաքսային ծառայողի և արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողի շփումների և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ապահովում [9; 13]: Ինչպես փաստում են վիճակագրական տվյալները՝ նկատելի է ԵԱՏՄ անդամակցության պայմաններում և ՊԵԿ նպատակաուղղված գործունեության արդյունքում 2014-2019 թթ. ինքնահայտարարագրման ծավալների աճի միտումը, ինչում իր դերն ունեն պետությունը՝ մաքսային մարմինների գլխավորությամբ:

Ինչպես կարելի է նկատել աղյուսակի տվյալներից, ՊԵԿ-ի կողմից որդեգրված՝ ինքնահայտարարագրման ծավալների աճին միտված, քաղաքականությունը տալիս էր իր արդյունքները: Ինքնահայտարարագրումը խրախուսվում է պարզեցվել է կազմակերպություններին հայտարարագրման ավտոմատացված համակարգեր մուտք գործելու ծածկագրի տրամադրումը: Մաքսային ձևակերպումների մասնագետին ծածկագիրը տրամադրվում է վկայական ստանալիս, իսկ կազմակերպության համար վկայականի առկայությունը պարտադիր պահանջ չէ: Մաքսային մարմինների ավտոմատացված տեղեկատվական համակարգի մուտքի ծածկանուն ու գաղտնաբառ տրամադրվում է հայտարարատուի մաքսային մարմիններին ներկայացված դիմումի հիման վրա: Այն տրամադրվում է անվճար հիմունքներով [10; 13]: Հայտարարատուն ստանալիս տեղեկացվում է մուտքանվան և գաղտնաբառի գաղտնիության պահպանման անհրաժեշտության մասին, ինչպես նաև ծանուցվում է ստանալուց հետո փոփոխելու անհրաժեշտության մասին՝ անվտանգության նկատառումներից ելնելով: Սակայն կարծում ենք, որ ինքնահայտարարատուներին ուղղված այս դրույթի վերաբերյալ խիստ հսկողություն է պետք իրականացվել, քանի որ այս արտոնությունը կարող է չարամտորեն օգտագործվել մաքսային միջնորդների կողմից՝ արհեստականորեն ստեղծելով սովերային գործարքների շուկա և հարկերից խուսափում: Այսինքն՝ փաստացի հայտարարագրումը կիրականացվի մաքսային միջնորդի միջոցով, սակայն փաստաթղթային առումով դա որևէ կերպ չի արտացոլվի: Դեռ 2016 թ. եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի ամփոփիչ նիստում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախկին նախագահ Վ. Հարությունյանը շեշտեց, որ մաքսային մարմինները բիզնեսով զբաղվող քաղաքացիներին հնարավորություն են ընձեռել՝ իրենց մաքսային հայտարարագրերը ավտոմատ համակարգով ներկայացնելու: 2017 թվականի փետրվարին վերոնշյալ խորհրդի նիստում քննարկման դրվեց «Էլեկտրոնային եղանակով մաքսային հայտարարագրման իրականացման և մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորում չունեցող անձանց՝ մաքսային հայտարարագրման ավտոմատ համակարգ մուտք գործելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը [16]: Նախկինում ՓՄՁ-ների բեռների հայտարարագրումն իրականացնում էին բեռնափոխադրող ընկերությունները, որից հետո ՓՄՁ-ն հատուցում էր մաքսային վճարները, վճարում լրացուցիչ 7-12%-ը մաքսային արժեքից և վճարում 5% շրջանառության հարկ: Այժմ ինքնահայտարարագրման համակարգը հեշտացվել է և ԱՏԳ մասնակցին

հնարավորություն է ընձեռվում իրականացնել իր մաքսային ձևակերպումները, իսկ շրջանառության հարկը վճարել 1,5%: Վերջին բարեփոխումների արդյունքում ինքնահայտարարագրողների թիվն ավելացել է շուրջ 130-ով [17]: Մինևույն ժամանակ պետք է ի նկատի ունենալ, որ տեսակարար կշիռները դիտարկելիս խոսքը գնում է հարաբերական մեծությամբ արտահայտված թվերի մասին: Մինչդեռ, բացարձակ թվերի դիտարկման պարագայում թվերն ավելի հուսադրող են: Փորձենք բացատրել պատճառը. վերջին տարիներին արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունները դրսևորում են աճի միտում: Եթե 2014 թվականից ԱՏԳ-ով զբաղվող մասնակիցների թիվը եղել է շուրջ 5000-ի սահմաններում, ապա 2018 թվականի կեսերից մինչ 2020 թ. նրանց թիվը հասել է մոտ 12200 տնտեսվարողի: Ինչպես նկատում ենք դիտվում է ավելի քան 120% աճ: Պետք է նշել, որ միայն 2018 թվականին ավելացել է շուրջ 4000 նոր տնտեսվարող՝ պայմանավորված ՊԵԿ-ի կողմից բացահայտված «ՆորՖոլկ Զոնաայթինգ» ՍՊԸ-ի հայտնի սխեմայի փլուզումամբ [18]: Եթե նախկինում մանր և միջին բիզնեսների բեռները բեռները ներմուծվում և ձևակերպվում էին այդ կազմակերպության, իսկ մինչ այդ էլ շուրջ տասը բեռնափոխադրողների կողմից և անունով, ապա 2018 թվականից ՊԵԿ-ը հանդես եկավ նախաձեռնությամբ և համակարգում տեղի ունեցան լուրջ փոփոխություններ. մասնավորապես, յուրաքանչյուր տնտեսվարող, հանդիսանալով հայտարարատու, պարտավորվեց ինքն իրականացնել իր ձևակերպումները: Այս տնտեսվարողները մաքսային համակարգ մուտք գործեցին առավելապես որպես ինքնահայտարարատուներ: Մաքսային մարմինները ցուցաբերեցին իրենց աջակցությունը և օժանդակությունը այս ոլորտ նոր մուտք գործող տնտեսվարողներին: Տեղի ունեցան կառուցվածքային փոփոխություններ, և հատուկ հավաքական բեռների ներմուծում իրականացնող անձանց ձևակերպումների համար առանձնացվեց և ձևավորվեց Արարատյան մաքսատուն-վարչության առանձին բաժին՝ ձևակերպումների և գանձումների ստորաբաժանումներով, որը գործեց շուրջ մեկ տարի՝ մինչև տնտեսվարողների հունի մեջ ընկնելը [19]: Որոշ տնտեսվարողներ, այնուամենայնիվ, նախընտրեցին մաքսային միջնորդներին՝ դիմելով արդեն իսկ գործը տիրապետող ու գիտակ անձանց: Նկատենք, որ այսօր այդ տարբերակը ընտրողների քանակի աճ է նկատվում:

Ինչ վերաբերում է 2019 թվականի տնտեսվարողների աճին, ապա այն որևէ համընդանուր տրենդ կամ տենդենց չունի, այսինքն ոչ մի էական հարկային կամ մաքսային վարչարարության փոփոխություն տեղի չի ունեցել որը կհանգեցնե

տնտեսվարողների թվի արհեստական աճի, որից հետևում է, որ տնտեսվարողների քանակը տնտեսական աճին գուզրնթաց աճում է [18]:

Ենթադրում ենք, որ 2020-21 թթ. անկման պատճառներում անմասն չեն ՀՀ քաղաքական վիճակը, պատերազմը, համաճարակը և որոշ վարչարարական փոփոխություններ՝ կապված խախտումների հանդեպ հսկողության մեծացմամբ, հետևաբար նաև ինքնահայտարարատուների համար ռիսկերի մեծացմամբ, քանի որ ի տարբերություն մաքսային ձևակերպումների մասնագետի, նրանք չունեն մասնագիտական ապահովագրություն: Այժմ գործում են շուրջ հարյուր միասնական ռեեստրում գրանցված մաքսային գործի ոլորտում գործունեություն իրականացնող մաքսային ներկայացուցիչներ, որոնց կազմում ըստ գործող օրենսդրության գործում են առնվազն երկու մաքսային ձևակերպումների մասնագետի վկայական ունեցող աշխատակիցներ: Հերթական տարբերությունը ինքնահայտարարատուի և մաքսային ներկայացուցչի ապահովման ներկայացումն է, որի ներկայացումը մաքսային ներկայացուցչի համար պարտադիր պայման է, [12, հոդվ 402 կետ 1; 13] իսկ ինքնահայտարարատուի համար՝ ոչ:

Նշենք, որ ցանկացած տարբերակի ընտրություն ենթադրում է որոշակի հետևանքներ. այն է՝ ինքնահայտարարագրման դեպքում կազմակերպությունը կրճատում է ծախսերը, սակայն մեծանում է ռիսկի գործոնը, և հակառակը՝ մաքսային ներկայացուցչին դիմելիս ծախսերն ավելանում են, բայց նվազում է ռիսկի գործոնը: Սակայն միանշանակ կերպով գնահատական տալը սխալ է, և յուրաքանչյուր դեպք պետք է դիտարկել հաշվի առնելով իրավիճակը: Օրինակ՝ ծախսերը հաշվարկելիս պարտադիր անհրաժեշտ է հաշվի առնել պարբերականությունը և տեսականին: Օրինակ՝ եթե կազմակերպությունը արտաքին տնտեսական գործունեություն ծավալում է ոչ այնքան պարբերական, ապա ավելի ձեռնառու տարբերակ է միջնորդին դիմելը, առավել ևս, եթե ապրանքը միատեսակ է: Իսկ այն դեպքում, երբ գործ ունենք ապրանքների մեծ տեսականու պարբերական ներմուծման հետ, ապա ծախսերի տեսանկյունից ավելի օպտիմալ տարբերակ է ինքնահայտարարագրումը: Սակայն այս դեպքում էլ մեծանում է ռիսկի գործոնը: Որպես այլընտրանք դիտարկվում է նաև համագործակցությունը մաքսային ներկայացուցչի հետ բանակցությունների արդյունքում կնքված պայմանագրի շրջանակներում: Փորձենք վերը նշվածը ներկայացնել կոնկրետ օրինակով: Մենք կատարել ենք մաքսային ներկայացուցիչների շուկայի գնային առաջարկների վերլուծություն: Դիտարկենք 3 կազմակերպություն:

Առաջինը՝ Ա ֆիրման երկու ամիսը մի անգամ Ուկրաինայից ներմուծում է մի տեսակի

ապրանք: Աշխատում է հուսալի գործընկերոջ հետ, իսկ փաստաթղթերը միշտ ուղարկվում են պատշաճ մակարդակով: Այս դեպքում ակնհայտ է, որ նախընտրելի տարբերակը մաքսային միջնորդի ծառայություններից օգտվելն է. քանի որ միջինացված հաշվարկով նա այդ ծառայության համար կվճարի 20,000-30,000 ՀՀ դրամ: Եթե խոսքը գնար նույն պայմաններով, սակայն հաճախակի իրականացվող ներմուծումների մասին, ապա միանշանակ նախընտրելի կլիներ ինքնահայտարարագրման տարբերակը:

Երկրորդը՝ Բ ֆիրման առևտրային գործունեություն է ծավալում, և նրա հիմնական առևտրային գործընկերը չինական Գ կազմակերպությունն է, որի տրամադրած փաստաթղթերում տեղեկատվությունը թերի է, իսկ ապրանքների տեսականին բազմազան է: Միջին հաշվարկով ամսվա մեջ երկու անգամ Բ կազմակերպությունը Գ կազմակերպությունից ապրանք է ստանում: Նախքան ապրանքի հայտարարագրումը, բավարար տվյալների բացակայության պատճառով, անհրաժեշտություն է առաջանում ապրանքի նախնական զննման, որն արդեն իսկ կապված է խոշոր դրամական ծախսերի հետ՝ բեռի առանձնահատկություններով պայմանավորված միջինացված տվյալներով կապահանջվի 50,000-100,000 ՀՀ դրամ: Ենթադրենք, որ զննումից հետո պարզ դարձավ, որ հայտարարագրվելու է 30 անուն ապրանք, որի հայտարարագրման համար մոտավոր հաշվարկով կապահանջվի 70.000-80,000 ՀՀ դրամ: Այդպիսի երկու ներմուծման արդյունքում կազմակերպությունը մոտավորապես կծախսի 240,000-360,000 ՀՀ դրամ: Ճիշտ է այսպես կազմակերպությունը նվազեցրեց իր ռիսկը, սակայն կատարում է ավելի մեծ ծախսեր, քան կկատարեր ինքնահայտարարագրման դեպքում՝ ավելի բարձր ռիսկայնության մակարդակով: Սրա այլընտրանքը մաքսային ձևակերպումներով զբաղվող աշխատակից ունենալն է: Այդ դեպքում միջինացված տվյալներով կազմակերպությունն իր աշխատակցին վճարելով 150,000-250,000 ՀՀ դրամ աշխատավարձ իրականացնում է իր ձևակերպումները: Ինչպես նկատում ենք ծախսերը համեմատական կարգով ցածր են: Այստեղ խնդիրը ռիսկ-ծախս օպտիմալ հարաբերակցության ապահովումն է. չէ որ բացի հայտարարագրումից իրականացվում է նաև նախնական զննում, ուստի բարձր է նաև պատասխանատվության մակարդակը, հետևաբար՝ նաև ռիսկայնությունը:

Դիտարկենք Երրորդ կազմակերպությունը՝ Դ ֆիրման խոշոր խանութների ցանց է, ունի մի քանի խոշոր առևտրային գործընկեր եվրոպական կազմակերպություններ, որոնք ապահովում են ապրանքների մեծ տեսականի, ինչպես նաև բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկություն-

ները: Արտաքին տնտեսական գործարքները կրում են պարբերական բնույթ. այն է ներմուծում հաճախ է իրականացվում: Այս դեպքում վատահորեն կարելի է պնդել, որ օպտիմալ կլինի իրականացնել ինքնահայտարարագրում:

Ուստիև, կարելի է նկատել, որ այս կամ այն տարբերակի ընտրությունն իրավիճակային է, սակայն ունի կարևոր տնտեսական նշանակություն. քանի որ անմիջական ազդեցությունն է թողնում ինքնարժեքի վրա: Հաշվի առնելով ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը պետք է նկատի ունենալ, որ պահանջարկը զնի հանդեպ զգայուն է, և սխալ ընտրությունը կարող է հանգեցնել լրացուցիչ չնախատեսված կորուստների, ծախսերի և մինչև իսկ վնասի:

2018 թվականի ապրիլից հետո կրկնակի ավելացել են մաքսային միջնորդական ծառայություններ մատուցող ընկերությունների քանակը: Ոլորտը ազատականացվել է և դարձել է ավելի մրցունակ: Եթե 2016 թվականից միջինացված տվյալներով 50-60 բրոքերային կազմակերպություն է եղել, ապա 2018-2019 թթ. միջակայքում դրանց քանակը կրկնապատկվել է, որն ուղղակիորեն վկայում է շուկայի ազատականացման մասին: Սակայն սա նաև պարտավորեցնում է՝ մաքսային միջնորդների որակավորման և հետագա աշխատանքների վերահսկման նոր մեխանիզմների ներդրման անհրաժեշտություն առաջացնելով [18]: ՀՀ ՊԵԿ 2020-2024 թվականների զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագրում նշվում է, որ անհրաժեշտ է վերանայել մաքսային միջնորդների ինստիտուտը ու կարգավորել մաքսային միջնորդների շուկան [8; 13]:


Անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորում ունեցողների վերապատրաստումը, քանի որ նրանց բանիմացության բարձր մակարդակը կնվազեցնի հայտարարագրման ժամանակ թույլ տրվող մի շարք սխալների տեսակարար կշիռը: Մաքսային միջնորդների մատուցած ծառայությունների որակը միշտ չէ, որ ունի գոհացնող մակարդակ: Հաճախ մաքսային մարմիններին ուղղված բողոքների պարզաբանման արդյունքում պարզվում է, որ գործը նույնիսկ չի էլ հասել մաքսային մարմինների տիրույթ, և խնդիրը մաքսային ձևակերպումների մասնագետի թերի իմացությունն է, օրինակ՝ կապված ԱՏԳ ԱԱ դասակարգման, պահանջվող փաստաթղթերի ցանկի կամ օրենսդրական դաշտի թերիմացության հետ, ուստիև առաջարկում ենք մաքսային ձևակերպումների մասնագետների աստատավորման հարցաշարը դարձնել ավելի ընդգրկուն, փոխել լիցենզիայի տրամադրման կարգը՝ քննությունը բաժանելով 3 բաղադրիչների՝ առաջինը՝ թեստավորում, երկրորդը՝ բանավոր քննություն, երրորդը՝ գործնա-

կան հմտությունների ցուցադրում: Առհասարակ 2020-2021 թվականների համար նախատեսված են մի շարք փոփոխություններ կապված մաքսային միջնորդների որակավորման գործընթացը փոփոխելու և իրենց հետագա գործունեությունը վերահսկելու հետ կապված:


Ձևակերպումների գործընթացի բարելավման և գործընկերային հարաբերությունների ամրապնդման համար ՊԵԿ-ը կազմակերպել և շարունակում է կազմակերպել դասընթացներ մաքսային ձևակերպումների մասնագետների համար, այդ թվում նաև անվճար հիմունքներով: Օրինակ՝ 2019 թվականին պարզ դարձավ, որ մաքսային միջնորդները կարիք ունեն նախնական հայտարարագրման ինստիտուտի վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերելու և ՊԵԿ-ը դեկտեմբերին երկու անգամ կազմակերպեց անվճար դասընթացներ նրանց համար: Գործընթացը շարունակական բնույթ ունի [18]: Դեռ շուրջ մեկ տասնամյակ առաջ ՀՄԿ-ն ընդգծեց կրթության կարևորությունը միջազգային առևտրի պարզեցման ու հեշտացման գործընթացում: Չպետք է անտեսել դասընթացների և թեյնինգների կարևորությունը: Ներկայիս գորբալիզացիայի և թվայնացման բարձր մակարդակը պայմանավորված է կրթության և հաղորդակցության մակարդակի բարձրացմամբ, որն էլ իր ուղղակի ազդեցությունն է թողնում միջազգային առևտրի զարգացման վրա: Նախագծում ներառված երկրների մեծամասնությունը պարբերաբար իրականացնում են իրազեկման միջոցառումներ և դասընթացներ ուղղված մաքսային տեսուչների, մաքսային ձևակերպումների մասնագետների և հայտարարատուների մասնագիտական զարգացմանն ու աճին: Սա իր ուղղակի ազդեցությունն է թողնում միջազգային առևտրի դյուրացման և կատարելագործման վրա. չէ որ այս սուբյեկտները իրենց ուղղակի կամ անուղղակի մասնակցությունն ունեն միջազգային առևտրում: Ուսին կարելի է ենթադրել, որ արդյունքում սա կհանգեցնի փաստաթղթաշրջանառության և սահմանահատման ժամանակատարության նվազեցմանը: Վիճակագրական վերլուծությունները ցույց են տալիս, որ այն երկրներում, որտեղ սեմինարների կազմակերպումը կրում է պարբերական բնույթ, այնտեղ փաստաթղթաշրջանառության և սահմանահատման ժամանակատարությունը 34%-ով ավելի ցածր է պարբերական սեմինարներ չկազմակերպող երկրների ցուցանիշների նկատմամբ [14]:

Եթե ուսումնասիրենք մաքսային միջնորդներին դիմող տնտեսավարողների շուկան և նրանց տեղաբաշխումը ըստ մաքսային ներկայացուցիչների, ապա կնկատենք, որ 2018-2019 թթ.-ին դաշտում առկա է տեսակարար կշիռների նկատելի փոփոխություն: Գծապատկերում մաքսային

միջնորդները սեզամենտավորվել են 3 մասի՝ խոշոր կազմակերպությունների առաջին տասնյակ, երկրորդ տասնյակ և այլ կազմակերպություններ:



Չժապատկեր 1: Գործարքների բաշխումը մաքսային միջնորդների շուկայում 2018 թ.-ի տվյալներով [18]:



Չժապատկեր 2: Գործարքների բաշխումը մաքսային միջնորդների շուկայում 2019 թ.-ի տվյալներով [18]:

2018 թ.-ին խոշոր կազմակերպություններն իրականացնում էին մաքսային հայտարարագրման ամբողջ գործարքների 45%-ը: Մինչդեռ 2019 թվականին տեսակարար կշիռը նվազել է շուրջ մեկ երրորդով՝ հասնելով 32%-ի, իսկ գործարքների ուղիղ կեսն արդեն իրականացվում է մնացած մաքսային ներկայացուցիչների կողմից:

Կարելի է նկատել, որ երկրորդ տասնյակը գրեթե ծավալային փոփոխություն չի ունեցել: Այսինքն՝ ստեղծված նոր մաքսային ներկայացուցիչներն ու շուկայի էլ ավելի ազատականացումն ու բարձր թափանցիկությունը առաջին տասնյակի կազմակերպություններին «վնաս» են հասցրել՝ հաճախորդների կորստի պատճառ դառնալով: Մյուս կողմից հայտարարատուների համար սա նոր հնարավորություն է ընտրել և աշխատել այն կազմակերպության հետ, որին կընտրեն առկա բազմաթիվ տարբերակներից: Այսպիսով շուկան պարտադրում է բարձր

մրցակցության պայմաններում ցուցաբերել առավելագույն ճկունություն և զգոնություն՝ դաշտում գոյատևելու համար: Միևնույն ժամանակ հաճախորդների արտահոսքը ունի մեկ այլ շատ ավելի խորքային պատճառ: Դաշտում առկա է բանիմաց և հմուտ մաքսային ձևակերպումների մասնագետների լուրջ պակաս: Նախկինում այս մասնագետներին համեմատաբար նպաստավոր և ձեռնառու պայմաններով աշխատանք սահմանափակ թվով կազմակերպություններ էին կարողանում առաջարկել՝ միայն խոշոր մաքսային ներկայացուցիչները: Այս մասնագետները տարիների ընթացքում ձեռք են բերել իրենց հավատարիմ գործընկերներին, ովքեր արդեն դիմում էին մաքսային միջնորդին ո՛չ թե այդ կազմակերպության հետ աշխատելու պատճառով, այլ՝ մասնագետի: Արդյունքում վերջին շուրջ երկու տարիների ընթացքում՝ շուկայի ազատականացման և բարենպաստ պայմանների առկայության շնորհիվ այդ մասնագետներն առանձնացան՝ ստեղծելով իրենց սեփական միջնորդական ծառայություններ մատուցող կազմակերպությունները: Այսպիսով, տեղի ունեցավ հաճախորդների զանգվածային արտահոսք առաջին տասնյակի մաքսային միջնորդներից դեպի երրորդ խումբ: Կարծում ենք, որ փոփոխության վրա իր նշանակալի ազդեցությունը թողեց նաև շուկայում այնպիսի հսկա կազմակերպության լուծարումը, ինչպիսին էր «ՆորՖոլկ Բոնասայթինգ» ՍՊԸ-ն: Այդուհանդերձ միանշանակ կարելի է փաստել, որ ՊԵԿ-ի կողմից արվում է ամեն-ինչ այս դաշտում հավասար մրցակցային միջավայր ստեղծելու, այն պահելու և արհեստական խոչընդոտների բացառման ուղղությամբ:

Կարծում ենք, որ իր մեծ ազդեցությունը կարող է ունենալ բրոքերների ասոցացիայի վերափոխման արդյունքում և պրակտիկ կիրառումը: Հաճախ սխալների բախվում ենք պարզապես ժամանակին համընթաց քայլել չկարողանալու պատճառով: Մասնավորապես՝ ինչպես տեղյակ ենք մաքսային մարմինները ստանում են մի շարք ծանուցումներ ու պարզաբանումներ, որոնց մի մասը նախատեսված է լայն շրջանակների, այդ թվում նաև հայտարարատուների և մաքսային ձևակերպումների մասնագետների համար: Առաջարկում ենք այդպիսի նյութերը «Mulberry» համակարգով առաքել նաև բրոքերների ասոցացիային, որն էլ կկրի պարտավորություն հասցեատերերին ծանուցելու (օրինակ էլ. փոստի միջոցով ծանուցելու եղանակով): Այս բացը առայժմ մաքսային մարմինները փորձում են լրացնել հայտարարությունների տախտակների միջոցով, սակայն սրանք բավարար հասցեական չեն: Իսկ անհատական տեղեկացումը կատարվում է հնարավորության սահմաններում, սակայն դա ոչ օպտիմալ և ցածր արդյունավետություն

ապահովող տարբերակ է: Մեկ այլ տարբերակով էլ կարելի է լուծել այդ հարցը: «Մեկ պատուհան»-ի հարթակում ավելացնել «Նորություններ» դաշտ, որտեղ կգետեղվի անհրաժեշտ տեղեկատվությունը: Սա լուծում է նաև տարածական արգելքը և նվազեցնում է մաքսավորների հետ անմիջական շփման անհրաժեշտությունը՝ ապահովելով նվազ ժամանակատարություն:

Հիմնվելով կատարված հետազոտության վրա առաջարկում ենք.

- Ինքնահայտարարատուները հայտարարագրման ավտոմատ համակարգ մուտքի կողմից ստանալուց առաջ պարտավորվեն անցնել ՊԵԿ-ի «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ում հայտարարատուների համար կազմակերպվող բազային գիտելիքներ տրամադրող դասընթացը և «Մեկ պատուհան» հարթակի թեստային տարբերակում հայտարարագիր գրանցեն, որը, ի տարբերություն մաքսային ձևակերպումների մասնագետի քննության ծածկագրի տրամադրման կլիմի ավելի պարզեցված և միևնույն ժամանակ կբացառի ինքնահայտարարատուների թերի տեղեկացվածությունը:

- Հայտարարատուին ավտոմատ համակարգ մուտքի կողմից տրամադրելուց հետո խստիվ հետևել մուտքանվան և գաղտնաբառի գաղտնիության պահպանմանը որ բացառվի այդ արտոնությունը մաքսային միջնորդների կողմից՝ չարամտորեն օգտագործումը, որը կարող է հանգեցնել արհեստականորեն ստեղծված ստվերային գործարքների շուկայի և հարկերից խուսափման:

- «Մեկ պատուհան»-ի հարթակում ավելացնել «Նորություններ» դաշտ, որտեղ կգետեղվի անհրաժեշտ տեղեկատվությունը: Սա լուծում է նաև տարածական արգելքը և նվազեցնում է մաքսավորների հետ անմիջական շփման անհրաժեշտությունը՝ ապահովելով նվազ ժամանակատարություն:

- Բրոքերների ասոցացիայի վերահիմաստավորում և պրակիկ կիրառում: Մաքսային մարմինները ստանում են մի շարք ծանուցումներ ու պարզաբանումներ, որ նախատեսված են լայն շրջանակների համար: Առաջարկում ենք այդպիսի նյութերը «Mulberry» համակարգով առաքել նաև բրոքերների ասոցացիային, որն էլ կկրի պարտավորություն՝ հասցեատերերին ծանուցելու (օրինակ էլ. փոստի միջոցով ծանուցելու եղանակով):

- Կազմակերպել տնտեսվարող սուբյեկտների տեղեկացվածության աստիճանի բարձրացմանն ուղղված միջոցառումներ՝ հստակ թիրախավորելով պոտենցիալ ԱՏԳ մասնակիցներին:

- Ներդնել մաքսային միջնորդների որակավորման և հետագա աշխատանքների վերահսկման նոր մեխանիզմներ, փոփոխել մաքսային

միջնորդների որակավորման գործընթացը: Խիստ կերպով հետևել մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորում ունեցող մասնագետների վերապատրաստմանը, քանի որ նրանց բանիմացության բարձր մակարդակը կնվազեցնի հայտարարագրման ժամանակ թույլ տրվող մի շարք սխալների տեսակարար կշիռը: Միայնակը հաճախ բխում են օրենսդրական դաշտի թերիմացությունից, ուստիև առաջարկում ենք մաքսային ձևակերպումների մասնագետների ատեստավորման հարցաշարը դարձնել ավելի ընդգրկուն, ինչպես նաև փոխել լիցենզիայի տրամադրման կարգը: Առաջարկում ենք քննությունը բաժանել 3 բաղադրիչի՝ առաջինը՝ թեստավորում, երկրորդը՝ բանավոր քննություն, երրորդը՝ գործնական հմտությունների ցուցադրում:

Եզրափակելով նշենք, որ եթե հայտարարատուները և մաքսային ներկայացուցիչները բանիմաց կերպով մոտենան հայտարարագրման գործընթացին, կայացնեն ճիշտ և օպտիմալ որոշումներ, ապա միանշանակ կշահեն թե՛ իրենք, թե՛ պետությունը: Մյուս կողմից էլ եթե մաքսային մարմինները շարունակեն իրենց ընտրած ուղին՝ գործընթացների ու փաստաթղթաշրջանառության պարզեցումը և թվայնացումը, օրինապահ տնտեսվարողներին աջակցություն ցուցաբերելը և գործընթացի ծախսատարության ու ժամանակատարության նվազեցումը ապա ՀՀ-ն կգրանցի ավել բարձր ցուցանիշներ, կկատարի միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունները և ի վերջո, տնտեսվարողների համար կստեղծի նպաստավոր պայմաններ՝ չվտանգելով պետության շահերը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Խաչատրյան, Մ.** Մաքսային գործ (ընդհանրական ակնարկ) Ուսումնական ձեռնարկ տնտեսագիտական բուհերի ուսանողների համար: – Եր., Տնտեսագետ, 2019
2. **Демичев, А. А. и Логинова, А. С.** Основы таможенного дела. Учебник. – Санкт-Петербург 2014, стр. 159
3. **Толкушкин, А. В.** Таможенное дело. – М.: Юрайт, 2008
4. **Чернявский, А. Г.** Таможенное право. – М. 2016
5. **Гокинаева, И. А.** «Основы таможенного дела» Часть I. таможенные процедуры учебное пособие. – Санкт-Петербург. 2015
6. **Гокинаева, И. А.** «Основы таможенного дела» Часть II. Таможенные операции учебное пособие. – Санкт-Петербург. 2016
7. **Коник, Н. В. и Невешкина, Е. В.** «Таможенное дело: учебное пособие» 2012. Учебники и учеб. пособ.д/ высшей школы (ВУЗы)

Օրենսդրական կարգավորումներ

8. ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 1830-Լ որոշման Հավելված «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի 2020-2024 թվականների զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագիր»
9. ՀՀ կառավարության 7 օգոստոսի 2008 թվականի «ՀՀ պետական եկամուտների (հարկային եվ մաքսային) վարչարարության ռազմավարության 2008-2011 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N 941-Ն որոշում 5
10. ՀՀ կառավարության 30.03.2017 թ. «Էլեկտրոնային եղանակով մաքսային հայտարարագրման իրականացման և մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորում չունեցող անձանց՝ մաքսային հայտարարագրման ավտոմատ համակարգ մուտք գործելու կարգը սահմանելու մասին» համար 546-Ն որոշում 6
11. «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք համար ՀՕ-241-Ն ընդունված 17.12.2014 թ., Գլ. 6
12. «Պայմանագիր Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին», Մոսկվա, 11.04.2017 թ.

Համացանց

13. <http://www.arlis.am/>
14. <http://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/media/Annual-Reports/English/DB19-Chapters/DB19-Trading.pdf> 14
15. <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIStatByDeclarationMethod>
16. http://www.petekamutner.am/Shared/Documents/_ts/_ti/Rev_Admin_Ref_Council/ardz_xorhurd_2017_fe b24.pdf
17. <http://www.petekamutner.am/mdVideos.aspx?sid=src>
18. https://www.petekamutner.am/mdVideos.aspx?sid=3&vtname=mdVideoGallery_ՀՀ ՊԵՆ նախագահի տեղակալ Շուշանիկ Ներսիսյանի հանդիպումը ՉԼՄ ներկայացուցիչների հետ /14.02.2020թ./
19. <https://www.petekamutner.am/mdNews.aspx?sid=src&ntname=mdOfficialNews&nid=5233>

Содана/Հանձնվել է՝ 09.06.2021

Рецензирована/Գրախոսվել է՝ 18.06.2021

Принята/Ընդունվել է՝ 25.06.2021